

դիմել փոխառութիւններէ, Այդ երկու շրջանի այդքան միմեանց հակառակ լինելը պէտք է մեկնել այն ժամանակով երբ հիմնարկուեցաւ դպրոցը և այն հանգամանքներով որոնց մէջ նա զարգացաւ և շարունակեց իւր գոյութիւնը, Առաջին շրջանում դրոյրոցը գրաւեց քաղաքացւոց ուշագրութիւնը իրրեքադարիս առաջին կանոնաւոր հայոց դպրոցը, Ծընդոյները այդ ժամանակ իւրեանց զաւակներին հոգեւոր դպրոց տալով յոյս ունէին որ շուտով դրոյրոցը կայսերահաստատ կանոնադրութեան հիման վերայ դպրանոցի կվերածուի որով իւրեանց որդիքը զինուորագրութեան արտօնութեան հետ միասին միջոց կունենան և միջնակարգ դպրոցի կրթութիւն ստանալ, Բայց անցաւ ժամանակ կանոնադրութեան հաստատութիւնը ուշացաւ, հոգեւոր դպրոցը ոչ թէ միայն թեմական դպրանոցի շվերածուեցաւ, այլև չկարողացաւ մինչև անգամ իւր չորս հիմնական դասարանը ևս բանալ, Պահանջը մեծ էր, աւելի սպասելու ժամանակ ևս չկար, ծնողները կորցրին իւրեանց դպրոցի վերայ դրած յոյսերը, վհատեցան և սկսան սառել դպրոցից, որից առաջ և եկաւ դպրոցի անկումը, Հոգաբարձութիւնը տեսնում էր այդ անկումը, բայց առաջն առնել, օգնել չէր կարողանում, որովհետև դպրոցի յետադիմութեան և անկման պատճառները պատահական կամ ժամանակաւոր չէին, այլ հիմնական, Պէտք էր դպրոցի նիւթական միջոցներն աւելացնել, պէտք էր նորան դպրանոցի վերածել և կառավարել այն կանոնադրութեամբ, որի հաստատութիւնը տէրութիւնից զեռ ստացուած չէր, Այն ժամանակ մի նպատակ կլինէր, որին կձգտէր հասնել դպրոցը, այն ժամանակ ուսման թերի ընթացքը լիակատարութիւն կստանար, միով բանիւ կիսատ գործը կամրոջանար, Ահա այս գրութեան մէջ էր գտնուում հոգեւոր դպրոցը, երբ 81 թ. ստացուեցաւ թեմիս այն ժամանակուայ առաջնորդ Մակար Սրբազանի հրամանը՝ վերջին դասարանի աշակերտներին չարձակել, որովհետև դպրոցը պէտք է կայսերահաստատ կանոնադրութեան հիման վերայ դպրանոցի վերածուէր, Այդ մի պատասխան էր հոգաբարձութեան 79 թ. գրած այն յայտարարութեան, որի մէջ նա մանրամասն նկարագրելով ուսումնարանի այն ժամանակուայ գրութիւնը, մատնացոյց էր անում դպրոցի անկմանը նպաստող հանգամանքների վերայ և գործը նորից ոտքի կանգնեցնելու միջոցներն էր ցոյց տալիս, Առաջնորդի հրամանը մի թարմ հոսանք մտքից քնած գործի մէջ, դպրոցը սթափուեցաւ, հոգի ստացաւ և ամբողջ գործը, բոլորեքեան սկզբան նոր յոյսերով, նոր եռանդով ու ոգևորութեամբ գործել, Սկուեցաւ դպրանոցական շրջանը,

Ե. Ծ.

Մ Ա Ն Բ Ա Ն Ա Ռ Ի Բ Ե

Է Բ Ա Ջ Ծ Ո Ղ Ն Մ Ի Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն Մ Տ Թ Ե Բ Ը :

Մօտաւորապէս XIII-րդ դարուց սկսած Եւրոպայում երեւան են գալիս մի շարք մարդիկ, որոնք իրանց կրանքով և գործունէութիւնով բողոքում են միջնադարեան ամբողջ աշխարհահայեցողութեան, գաղափարների և նիստ ու կացի դէմ: Եւ որովհետեւ այս մարդիկը պահանջում էին մարդու բոլոր յատկութիւնների և ընդունակութիւնների հաւասար զարգացումը — նրանք մարդկայնութեան քարոզիչներ — հումանիտաներ կոչուեցին, իսկ այդ ուղղութիւնը, հումանիզմ: Հումանիտաներ թիւք քանի գնաց, շատացաւ, հումանիզմը իւր ծննդավայրից — իտալիայից — տարածուեցաւ Գերմանիա, Փրանսիա և այլն: Եւ ուր որ յայտնուում էին հումանիտաները հին գաղափարները տապալուում էին և նրանց փոխարէն հաստատուում էին այն նորերը, որոնք զարգանալով մեր այժմեան սեպակախոթութիւնն են դարձել: Այստեղ մենք ծանօթացնում ենք պ. Ա. Բարեանի թարգմանութեամբ գերմանացի հումանիստ Էրազմուս Ռոտերդամցու մանկավարժական մտքերի հետ: Քին, միջնադարեան մանկավարժական սիստեմների և դպրոցների նկարագիրը տաւոց յետոյ նա յայտնում է իւր մանկավարժական մտքերը: Նրա առած նկարագրից երևում է, որ մեր խախտիչայական դպրոցները՝ շատ նման էին միջնադարեան ուսումնարաններին: Ահա Էրազմուսի մտքերը.

Էրազմուսի կարծիքով սկզբնական ուսուցումը պէտք է սկսել վաղ հասակից: Ուսուցիչը պէտք է փափկութեամբ, քաղցրութեամբ և մանկավարժական շնորքով վարուի մանուկների հետ: Հարկաւոր է երեխային ուսուցանել կամաց — կամաց, ասում է նա, և օրինակելի գրուածքներ ընտրելով գործադրել այն հասակի համեմատ, որ սիրում է աւելի զուարճութիւն, քան նրբութիւն: Հարկաւոր է մարտարութեամբ աշխատել ուսուցումը դարձնել մի տեսակ խաղ և յոգնածութիւն չպատճառել: Ուսուցիչները պէտք է գրաւեն աշակերտների սէրը, այս է ուսուցման յաջողութեան առաջին քայլը: Ուսուցչին սիրելով, աշակերտը կը սիրէ անշուշտ և առարկան: Մանուկների վերայ մեծ ազդեցութիւն ունենալու համար Էրազմուսը առաջարկում է անբաժան և զգացմունքի զարգացում. իսկ մարմնատր պատիժները վճռապէս մերժում է: Աւելի լաւ է ուղարկել երեխային ջրաղաց կամ տալ նորան արուեստաւորի մօտ՝ քան թէ ծեծելով ստիպել որ սովորէ: Էրազմուսը իւր գիտութիւններ ուսուցանելու վերաբերմամբ ունեցած կարծիքները կանոնաւոր կերպով փորձեց արտայայտել ուսուցիչների համար. Դասատուութեան և դանախների՝ անունով դասագրքի մէջ: Էրազմուսի կարծիքով ամենից առաջ պէտք է սկսել լեզուներ ուսուցանել որովհետեւ լեզուներ հասկանալու շատ ընդունակ են երեխաները: Յետոյ կարդալ այնպիսի առակներ և վէպիկներ, որոնք օրինակելի ոճով են գրուած. յետոյ արդէն սկսել երաժշտութիւն, թուրքամուսիկ և աշխարհագրութիւն: իսկ կենդանաբանութիւնից և ըուսաբանութիւնից պէտք է նկարների օգնութեամբ ծանօթութիւններ հաղորդել:

Դասարանում ուսուցիչը պէտք է կրկնել տայ իւր քացարկութիւնները, ուղղէ այն, ինչ որ աշակերտները չեն հասկացնել կամ լաւ չեն ըմբռնել, իսկ աշակերտները պէտք է անցածի մասին ամփոփ ծրագիրներ կազմեն:

Ընդհանուր ուսումը աշակերտը պէտք է վերջացնէ 17 կամ 18 տարեկան հասակում, երբ արդէն պէտք է ընտրէ որ եւ է մասնագիտութիւն: Էրազմուսը խիստ որոշ մաս-

Նագիտութեան հակառակ է: Նորա կարծիքով բազմակողմանի հաստատ ծանօթութիւնները պէտք է մասնագիտականներէց առաջ ուսուցանուին. մանաւանդ այդ անհրաժեշտ է ուսուցիչներէ համար: Նորա կարծիքով միայն կրթուած եւ մարդասէր ուսուցիչները կարող են մատաղ սերնդի հասարակութեան այդ ազագային լաւ դաստիարակները, դասնաւ: Երեխաները, ասում է այս հումանիտար, հոգւոյն Սըրբոյ տաճարն են: Այդ նորատունկ քոյսերի մէջ թագնուած են սենատօրներ, բժիշկներ, վանահայրեր, եպիսկոպոսներ, կայսրներ: Մատաղ սերնդի համար ամենանորը հոգատարութիւն է հարկաւոր, որ սակայն շատ անգամ ամենատղէտ, ատեւի եւ կուպիտ ուսուցիչներէն է յանձնուում:

Երազմուտը խիստ բողոքում է այն մարդկանց դէմ, որոնք մեծամտութեամբ են վերաբերուում դէպի ուսուցչի պաշտօնը: Նա ասում է թէ շատերը ամօթ են համարում ամբողջ կեանքը անցկացնել միայն քերականութեան վերայ աշխատելով, կարծես թէ նկարչները իրենց ամբողջ կեանքում միմիայն նկարչութեամբ չեն պարասուում: Բնութիւնը ընդհանուրի երբանկութեան համար զանազան ընդունակութիւններ է շնորհել անհատներին. չկայ մի արհամարհելի մաս մարմնի ամբողջութեան մէջ. ամէն մի մաս ունի միայն հաւասար գին ամբողջութեան զարդարանքի եւ պահպանութեան համար:

Երազմուտն այն կարծիքն ունի, որ ուսուցման եւ կրթութեան բարենորոգութեան մէջ էլ պէտք է կամայ-կամայ գործել շատ երեւոյթները պէտք է թողնել առանց ուշադրութեան աշխատել շարք թուլացնել, եթէ միայն անհրաժեշտ է իսպառ ողնացնել եւ ի նկատի ունենալով մարդու քնարութեան թոյլ կողմերը, քանաւ, որքան կարելի է, դիմել եթէ ոչ քայքայածակ դիմեցիկն, զոնէ իրականութեան անքան նախանձեկի վիճակին, որքան այդ նսարաւոր է:

Դ ե ղ ա թ ու լ ե ս տ ն Ա մ եր ի կ ա յ ու մ : - Գործնական իստիկ. խօսքը առած է դարձած եւ ամեն անգամ, որ խօսք է լինում ամերիկացիների մասին, անմիջապէս մեր մտքում զարթում է դուրսի պատկերը, մեր պլանիին հնչում է ուրու զնգոցը: Մեզ թուում է, թէ գործնական ամերիկացին քացի առօրեայ կեանքի հոգեց, քացի ստամոցի խնդրից չէ զբաղուում ոչ մի վերացական, մարդու հոգուն, սրտին գոհացում թուող խնդիրներով: Եւ յիշուի, մեզ շատ տարօրինակ է թուում երբ խօսում ենք ամերիկացու գեղարուեստական ճշակի, նուրբ զգացմունքների մասին. կարծես քանաստեղծութիւնը ամերիկացու համար գոյութիւն չունենայ: Միմյուր իրականութիւնը բոլորովին այդ չէ: Ծննդից է, թէ եւ ամերիկացին շատ գործնական մարդ է, քայք դեռ դա ապացոյց չէ, որ նրա մէջ մտած է, խնդրուած է գեղեցիկ սէրը եթէ մարդու քաղաքիչ մասերն են մարմինը, հոգին, միտքը, սիրտը, ալա ուրեմն հարկաւոր է գոհացում տալ նաեւ զբանց պահանջներին, որպէս զի մարդու կեանքի ներդաշնակութիւնը շխանագարուի: Եթէ մարմնի համար անհրաժեշտ է կերպարուքը, անհրաժեշտ է նաեւ հոգու, սրտի մուտքը: Հետեւաբար ամերիկացին էլ գործնական մարդ լինելով խնդրած չէ կարող անուշադիր թողնել նաեւ իւր հոգու, սրտի, մտքի պահանջիցը: Եւ ամերիկացին անուշադրութեան չէ էլ մատնում այդ ամիւնը: Դրա ամենալաւ ապացոյցն է նրա գեղեցիկ գրականութեան զարգացումը, նրա երաժշտական եւ նկարչական ուսումնաբանները, որոնք ոչնչով յետ չեն Եւրոպայի նմանօրինակ ուսումնաբաններից:

Նկարչութեան վերաբերմամբ «Cosmopolitan» հանդիսւում հաղորդուած են մի քանի տեղեկութիւններ, որոնցից

պարզ երեւում է մեր ասածի ճշմարտութիւնը: Նիւ-Իորկում գոյութիւն ունի ոչ միայն Ամերիկայի, այլ եւ ամբողջ աշխարհի ամենահարուստ գեղարուեստի ընկերութիւնը, որ յայտնի է «Art Students league»- արուեստ ուսումնասիրողների միութիւն. անունով այդ ընկերութիւնը ունի հիմնած մի նկարչական ուսումնարան, որ 1100 աշակերտ ունի: Նոյն քաղաքում արդէն 100 տարի է, որ գոյութիւն ունի գեղարուեստի ազգային ծեմարանը: Վերջապէս երեք տարի առաջ միւնիոնք քաղաքում հիմնուեց մի նկարչական ուսումնարան, որ տարեկան հարիւրաւոր աշակերտներ է ընդունում: Ամերիկայում մեծ հռչակ ունի Փիլադելֆիայի նկարչութեան ուսումնարանը. այդ ուսումնարանի աշակերտներն արդէն առիթ են ունեցել քոյց տալու իրենց ստացած նկարչական հմտութիւնը: Փիլադելֆիայում մի ուրիշ ուսումնարան էլ կայ. ուր մտերքք թոյլ են տուել նաեւ կանանց: Ամերիկայի արեւմտեան շահագնեքը վերջին տարիներս առանձին զարկ տուին նկարչութեան առաջադիմութեանը. այնտեղ այժմ արդէն բազմաթիւ նկարչական ուսումնարաններ են բացուած: Այդ ուսումնարանները զետեղուած են փառահնդ պալատներում եւ առատօրէն ունին ամեն տեսակ յարմարութիւններ եւ դասակարգ պիտոյքներ: Մի-չիգան նահանգի Դեորուս քաղաքում կայ գեղարուեստի մուզէյ, որ քաղաքի ամենալաւ շէնքն է: Դա հիմնուած է վեց տարի առաջ եւ մի ուրիշ շինութեան մէջ էր զետեղուած, քայք նրա նիւթերն այնքան շատացան եւ հասարակութիւնը մի այնպիսի համակրութեան եւ հետաքրքրութեան վերաբերեց դէպի դա, որ հարկաւոր եղաւ առանձին եւ յատուէ շէնք կառուցանել: Չորս տարի առաջ մուզէյում 40 աշակերտ կար, իսկ այժմ արդէն դրանց թիւը 150-ի է հասնում. աշողութեամբ դասընթաց աւարտողներն առանձին նպաստ են ստանում իրենց գեղարուեստակ կրթութիւնը Եւրոպայի ամենալաւ դպրոցներում կատարելագործելու համար: Յիմնուածի դեղարուեստական ծեմարանը 400 աշակերտ ունի. այդ ծեմարանի պրոֆեսորները իւրաքանչիւր տարի գնում են Եւրոպա, որպէս զի անձամբ կարողանան ստուգել եւ դիտել այնտեղ եղած առաջադիմութիւնը: Այստեղ էլ ամենալաւ աշակերտներն առանձին նպաստ են ստանում Եւրոպա գալու համար, այդ նպատակով նրանք առաջին տարին տալիս են 5000 Ֆրանկ երկրորդ տարին 5500 Ֆր., իսկ երրորդ տարին - 4000 Ֆրանկ: Չիկագոյում կայ գեղարուեստական ինստիտուտ, 1870 թուին հիմնուած, որ անցեալ տարի 1000 աշակերտ ունէր: Այդ ուսումնարանն ամենայն կողմից կարող է օրինակելի համարուել - ունի 27 պրոֆեսոր, որոնք դասախօսում են ամեն առարկայ, որ այպաւ թէ այնպէս կապ ունի նկարչութեան հետ, օրինակ մարմնակազմութիւն, անեւտրական զէնքերը զարդարելու արուեստը եւ այլն: Ուսումնարանի գաւազն ենքն այցելողների թիւը հազարների է հասնում: Միմիայնապէս որ քաղաքի շահարի ամենաառջնակեցիկ քաղաքն է, երկու գեղարուեստական ուսումնարան կայ, որի մէկը բոլորովին ընդօրինակութիւն է կամ անելի լաւ է ասել, քաղաքացի է Պարիզի ամենալաւ ուսումնարանների: Մէն-Լուիի ուսումնարանն 250 աշակերտ ունի. դա էլ հռչակուած է իւր շէնքով եւ նպատակաբար շինութեամբ: Բուստոնի գեղարուեստի մուզէյումը հիմնուած է 17 տարի առաջ եւ այժմ 200 աշակերտ ունի: Այստեղ մանաւանդ նշանաւոր է յունական արուեստի գոթական ծարտարապետութեան եւ վերածնութեան շէնքի պատմութեան ուսումնասիրութիւնը: Բալտիմորում արուեստների ինստիտուտը անագին գրատուն ունի եւ 1000 աշակերտ ու 26 պրոֆեսոր:

Ոչպէս ընթացողը նկատուել, այստեղ հաշուած են միայն յայտնի եւ մեծ գեղարուեստական ուսումնարանները, մինչդեռ կան դեռ եւս բազմաթիւ երկրորդական, ոչ

ընդհանուր հոշակ վայելող ուսումնարաններ, որոնք չեն յիշատակուած. բացի այդ ընդհանուր կրթական հաստատութիւնները նոյնպէս գուրկ չեն նսեւ գեղարուեստական աւարկանների դասատուութիւնից:

Այս ամենը պարզ ապացոյց է, որ Ամերիկացու հոշակ վայելող գործնական կեանքը բոլորովին արգելք չէ, որ այդ կեանքը զարդարուած լինի նաև գեղարուեստի այսինքն մարդու սրտին, հոգուն խօսող արուեստի արդիւնքնեռով: Եւ այդ կողմից Միացեալ-Նահանգները Եւրոպայից սովորելու շատ քան ունին ի հարկէ: քանի որ Եւրոպան ունի հարուստ անցեալ, մինչդեռ ներկայ գեղարուեստական կրթութեան վերաբերմամբ՝ նախանձելու տեղիք չունին:

Վանական.

Ս Ա Ր Կ. \*

Ջ Ր Ո Յ Յ Ն Ա Ղ Ա Ր Ո .

Խորին գիշեր լինելով, ես մի մոմ վանեցի և ձեռով պաշտպանելով լոյսը՝ մտայ հին պարակեր:

Հինգ տարի և մինչև անգամ աւելի էր, որ ոչ ոք չէր մտել այդտեղ, բացի գուցէ որ և է գողից, պտուղների հասած ժամանակը:

Ճեմելիքները անյայտացել են անդէպ բոյսերի տակ. խաղողի որթերը կորել են բարձրացած եղինջների մէջ, փշերը խեղդուած են հաղարջներիներին և ծառից վայր ընկած չոր ձիւղերը ձայթձայթուած են իմ օտների տակ...

Ես առաջ եմ գնում. խոնաւ գիշեր է, լուսթիւն, ամայութիւն, միայնութիւն, — և ես անտառի ազգած խորհրդաւոր ահ ու գողով եմ համակուած:

Ես հասայ մտանք: Յամառ բանալին ձուռում է ժանդոտած փակների մէջ. ես դրժուարութեամբ քաշում եմ ծանր դուռը, որ կարծես օդահան մեքենայով է փակած, — և ներս եմ մտնում...

Յանկարծակի երեւցած լոյսից, որ ցօլացրեց դաձը, մի ընդհանուր իրարանցում յառաջ եկաւ. լոյսը փարստեց ժողովարանի խաւարը, և մի ամբողջ դարշելի ցեղ, սարսափելի սարդերի մի ամբողջ համր խումբ՝ դողում, շարժուում և խելագարի նման փախչում են, կարծես մի տատանուող սև արև լինին, և շտապով նետուում են զէպի անկիւնները:

Բոլորը թագնուեցան, բոլորն անյայտացան:—Միայն մէկը այդ հրէշներից, ամենամեծը՝ թաւամազ, սարսափելի արհամարհել էր փախուստը: 'Ես մնացել էր իւր տեղում անշարժ, սեւին տալով սպիտակ պատի վրայ, իւր ութը յաղթանդամ թաթերի վրայ կանգնած:

Մեկահաճ նա նայում և սպասում է ինձ, — կարծես կուռի է կանչում...

Մտքիցս աւելի շուտ ձեռք պտտախանեց: Մոմը, ինչպէս մի հորիզոնական ուղղութեամբ բռնած նիզակ՝ բորբոքեց յամառին. նա ձթթուած ոլրուում և — վայր է ընկնում...

Եւ մինչ ոսկրներիս մէջ ուղեղը ստուած նայում եմ սարդի մահուան դէմ մղած վերջին կուռինս ևս լուսւմ — այդ, ևս լուսւմ եմ հաստատ, իմ ականջով, — իմ սպանածի ողու ձայնը, որ ինձ ասում է:

« Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, քեզ համար ոչինչ չարժեմ ևս ծառայում եմ քեզ ձրիարար, ինչպէս քո բոլոր հաւատարիմ դաշնակիցները, և դու ասում ես ինձ, անհանգիստ մարդ:

« Ես ինձ համար դործ էի շինել ազատել քեզ ձանձներից և մեծիկներից, որ կուռեին քեզ, եթէ ևս չլինէի. ևս տալիս եմ քեզ այնքան, որքան կարող եմ, քո ամառուան գիշերների հանգստութիւնը, — և փոքր ինչ առաջ ևս կանգնեցրի փողոց մերմին, որ գնում էր քո ամենասիրելի երկխային անողբքելի մահով սպանելու...

« Բայց դու ինձ ազեղ ևս համարում և իրաւունք ունիս, որովհետեւ ինքդ այդքան գեղեցիկ ես, իմ ծառայութեանց փոխարէն դու աներկիւղ սպանում ես ինձ, և իրաւունք ունիս, որովհետեւ դու ինձանից ուժեղ ես:

« Սպանիչ, ցած, ապերախտ, — անմիտ: Թարգմ. Չ. Յ:



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Մ Ա Մ Ո Ւ Լ Ե Ի Ե Կ Ե Ղ Ե Յ Ի :

Մամուլի արած յառաջագիմութիւնն այսօր լուսաւորուած երկրներում այնքան մեծ է, որ հասարակական ամէն մի հաստատութիւն և ամէն մի գործիչ պէտք է հաշիւ տայ նրան և աչքի առաջ ունենայ, Ինչպէս որ ամէն մի գէնք առհասարակ, այսպէս և մամուլը հնարուած է մարդկանց անձն և իրաւունքը պաշտպանելու համար, սակայն ճիշդ այնպէս, ինչպէս դաշոյնը մարդասպանի և աւաղակի ձեռքին պաշտպանողական գէնք չէ, այլ անիրաւութեան և յանցագործութեան օժանդակիչ միջոց, այդպէս էլ այսօր մամուլն ունի իւր ի շարք գործ գնողներ ի դասակարգը: Ինչպէս որ գէնքի ի շարք գործ գնողները դասակարգեր են բաժանուում, այդպէս էլ մամուլի

\* L'Araignée, par Nadar.